

Ներածություն

ԱՀԿ-ի կազմավորման հիմքում գտնվում է Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրը (ՄԱԳՀ): Որպես ֆորմալ կազմակերպություն՝ ԱՀԿ-ն ստեղծվել է համեմատաբար վերջերս՝ 1995թ-ի հունվարի 1-ին, բայց գործնականում այն գործում է 1947թ-ից, երբ ստորագրվեց ՄԱԳՀ-ն:

Արժույթի միջազգային հիմնադրամի և Վերակառուցման ու զարգացման համաշխարհային ֆանկի օրինակով՝ ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո մտադիր էին ստեղծել համաշխարհային առևտուրը և առնչվող խնդիրները կարգավորող միջազգային կազմակերպություն: 1930-ականների տնտեսական ճգնաժամի հիշողությունը դեռ թարմ էր և երկրները համոզված էին, որ ազատ առևտուրը ընդհանուր քարեկեցության և խաղաղ կենսակերպի կարևոր նախապայման է:

Միջազգային առևտրի կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը ստորագրվեց Հավանայում, ՄԱԿ-ի Առևտրի ու զարգացման համաժողովում 1948թ.-ին 53 երկրների կողմից: Հավանայի հռչակագիրը ներառում էր ոչ միայն ապրանքների առևտրի կարգավորման, այլև հարակից ոլորտների, ներառյալ՝ զբաղվածության, ներդրումների, ծառայությունների, հակամրցակցային գործունեության կարգավորման, տնտեսական զարգացման և բազմաթիվ այլ խնդիրներ:

Մինչ այդ՝ 1947թ-ի հոկտեմբերի 30-ին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ 23 երկրներ (որոնց բաժին էր ընկնում համաշխարհային առևտրի չորս-հինգերորդը) ստորագրել էին ՄԱԳՀ-ն: Ու Քանի որ ակնկալվում էր, թե շուտով ստեղծվելու է *Միջազգային առևտրի կազմակերպությունը*, ապա ՄԱԳՀ-ն ստորագրվել էր սուկ իբրև ժամանակավոր համաձայնագիր: Սակայն՝ ԱՄՆ-ի կոնգրեսը այդպես էլ չվավերացրեց *Միջազգային առևտրի կազմակերպության* հիմնադիր փաստաթուղթը՝ պատճառաբանելով, թե այն սահմանափակում է ԱՄՆ ինքնուրույնությունը ներքին տնտեսական քաղաքականության ոլորտում: Արդյունքում ՄԱԳՀ-ն, որն ընդամենը համաձայնագիր էր, հարկադրված վերափոխվեց *դե ֆակտո* կազմակերպության՝ որպես այդպիսին մնալով մինչև 1995թ-ը:

ՄԱԳՀ-ի ստորագրմանը հաջորդող 50 տարիների ընթացքում անցկացվեցին բանակցությունների 7 փուլեր, որոնց արդյունքում համաշխարհային տնտեսությունում միջին մաքսատուրքերը 1947թ-ի 40%-ի համեմատ նվազեց մինչև նվազ քան 5%: Բանակցությունների առաջին փուլը իրականացվեց Ժնևում, որում և ստորագրվեց հիմնադիր փաստաթուղթը: Հետագա փուլերն անցկացվեցին Աննեսիում (Ֆրանսիա) 1949թ-ին, Թորքուեյում (Անգլիա) 1951թ-ին, Ժնևում 1956թ-ին և 1960-62թթ-ին (վերջինը այլ կերպ ընդունված է կոչել Դիլլոնի փուլ՝ ի պատիվ ԱՄՆ-ի պետքարտուղար Դուգլաս Դիլլոնի, որը հրապարակավ առաջարկել է սկսել բանակցությունների այդ փուլը):

Առավել կարևոր էին, սակայն, Քեննեդու փուլը 1964-67թթ-ին, Տոկիոյի փուլը 1973-79թթ-ին և Ուրուգվայի փուլը 1986-94թթ-ին: Քեննեդու փուլի հիմնական արդյունքը մաքսատուրքերի մեկ-երրորդով կրճատումն էր և հակազնագցումային համաձայնագրի ստորագրումը: Տոկիոյի փուլի հիմնական արդյունքը ոչ-գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ ոչ-տարիֆային արգելքները կանոնակարգող համաձայնագրերն էին: Դրանց

թվում էին պետական գնումների, մաքսային արժեքի որոշման, ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի, լրավճարների, փոխհատուցման տուրքերի վերաբերյալ համաձայնագրերը: Ուրուզվայի փուլի արդյունքում մաքսատուրքերը դարձյալ կրճատվեցին՝ միջինը 36%-ով, էական առաջընթաց գրանցվեց զարգացող երկրների համար կարևոր նշանակություն ունեցող ապրանքների՝ գյուղմթերքների, տեքստիլի, հագուստի առևտրի ազատականացման ոլորտում, ստեղծվեց ԱՀԿ-ն:

Մաքսատուրքեր

ՄԱԳՀ-ի հենց նախաբանում նշվում է, որ երկրների նպատակը «մաքսատուրքերի և առևտրի այլ խոչընդոտների էական նվազեցումն ու միջազգային առևտրում խտրական մոտեցման վերացումն է»: Ի լրումն հոդված 28bis-ում նշվում է՝ «կողմերն ընդունում են, որ մաքսատուրքերը հաճախ լուրջ խոչընդոտ են առևտրի համար, ուստի միջազգային առևտրի ընդլայնման համար մեծապես կարևորվում են փոխադարձ ու փոխշահավետ բանակցությունները, որոնք ուղղված են ներմուծման ու արտահանման նկատմամբ կիրառվող մաքսատուրքերի ու այլ վճարների ընդհանուր մակարդակի էական կրճատմանը»:

Բնականորեն անհմաստ է պայմանավորվել մաքսատուրքերի կրճատման վերաբերյալ, եթե հետո երկրները կարող են դրանք միակողմանիորեն բարձրացնել: Այդ պատճառով Հոդված 2-ը սահմանում է՝ երբ երկրները պայմանավորվում են մաքսատուրքերի կրճատման մասին, ապա դրանց հետագա բարձրացումը արգելվում է (մաքսատուրքերի կապակցում): Բացառությամբ՝ հոդված 28-ը սահմանում է, որ երեք տարին մեկ երկրները իրավունք ունեն փոխել նախկինում կատարված զիջումները՝ բանակցելով և համաձայնության գալով այն երկրի, որը առանձնակի շահագրգռվածություն ունի, ձգտելով պահպանել փոխադարձ և փոխշահավետ զիջումների այնպիսի ընդհանուր մակարդակ, որը պակաս բարենպաստ չէ, քան նախկինում էր:

Մաքսատուրքերի կապակցումների աճը Ուրուզվայի փուլի արդյունքում

Տոկոսով մաքսատուրքերի տողերի նկատմամբ, 1986-94-ից առաջ և հետո

	Առաջ	Հետո
Զարգացած երկրներ	78	99
Զարգացող երկրներ	21	73
Անցումային տնտեսությամբ երկրներ	73	98

Ավելին, որպեսզի մաքսատուրքերի զիջումները լինեն իրական, անհրաժեշտ է մաքսային արժեքի որոշման, ապրանքների դասակարգման և մաքսային վարչարարության փոխհամաձայնեցված համակարգ: Այսպես՝ երկիրը կարող է որևէ ապրանքի մաքսատուրքը 20%-ից կրճատել մինչև 10%, բայց դա որևէ արժեք չի ունենա, եթե միևնույն ժամանակ կրկնապատկի մաքսային արժեքը կամ ապրանքը վերադասակարգի մեկ այլ հոդվածում կամ շեշտակի բարձրացնի մաքսավճարները:

Հոդված 7-ը սահմանում է, որ ներմուծվող ապրանքի մաքսային արժեքը պետք է որոշվի այդ ապրանքի «փաստացի արժեքով», որն իր հերթին սահմանվում է, որպես այն գինը, որով այդ կամ նման ապրանքը վաճառվում է սովորական առևտրային գործարքների ընթացքում, մրցակցային պայմաններում: Քանի որ սույն սահմանումը միարժեք չէր, ապա Տոկիոյի փուլում ստորագրվեց առանձին համաձայնագիր՝ մաքսային արժեքի որոշման մասին, որը որպես մաքսային արժեքի որոշման հիմք է սահմանում «գործարքի գինը»:

Համանմանորեն, երկրների մեծ մասում (133 երկրներում, որոնց բաժին է ընկնում համաշխարհային առևտրի 98%-ը, այդ թվում՝ Հայաստանում) կիրառվում է միասնական դասակարգիչ՝ Ապրանքների նկարագրման և համարակալման ներդաշնակեցված համակարգ (վարում է Համաշխարհային մաքսային կազմակերպությունը, դասակարգիչը բաղկացած է 6 նիշից):

Ի վերջո, Հոդված 8-ը սահմանում է, որ մաքսավճարները սահմանափակվում են մատուցված ծառայությունների արժեքով և չեն կարող հետապնդել քողարկված հովանավորչության կամ հարկման նպատակ: Հայաստանում մաքսային ձևակերպումների համար գանձվում է 3500 դրամ մաքսավճար, մինչև մեկ տոննա քաշ ունեցող ապրանքների մաքսային հսկողության համար՝ 1000 դրամ (ավելի քաշի դեպքում, յուրաքանչյուր մեկ տոննայի համար՝ 300 դրամ), յուրաքանչյուր փաստաթղթի տրամադրման համար՝ 1000 դրամ:

Ոչ-խտրականություն

Ազգերի առավել բարենպաստության սկզբունք

Ոչ-խտրականությունը, որը ԱՀԿ-ի ամենահիմնարար սկզբունքն է, դրսևովում է Հոդված 1-ում՝ ազգերի առավել բարենպաստության սկզբունք (ԱԱԲ), և Հոդված 3-ում՝ ազգային մոտեցման սկզբունք (ԱՄ):

Ըստ Հոդված 1-ի՝ ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ դրանց առնչությամբ ցանկացած առավելություն, բարենպաստություն, արտոնություն կամ իմունիտետ, որը որևէ երկիր շնորհում է որևէ այլ երկրից ծագած կամ որևէ այլ երկրի համար առաքված որևէ արտադրանքի, *անմիջապես և անվերապահորեն* տրամադրվում է մյուս բոլոր երկրների տարածքում ծագած կամ մյուս բոլոր երկրների տարածք առաքված նման արտադրանքին:

Այսինքն, եթե Ա ու Բ երկրները պայմանավորվում են որևէ ապրանքի նկատմամբ մաքսատուրքի զիջման վերաբերյալ, ապա զիջող կողմը պարտավոր է միննույն զիջումը անմիջապես տրամադրել բոլոր մնացած երկրներին՝ առանց այդ երկրներից փոխադարձ զիջում պահանջելու իրավունքի:

Մակայն՝ ԱԱԲ-ն ենթակա է որոշ էական սահմանափակումների: Նախ՝ հենց Հոդված 1-ը ԱԱԲ-ից բացառում է բոլոր այն պայմանավորվածությունները, որոնք առկա էին նախքան ՄԱԳՀ-ի ստորագրումը (1947թ), թեպետ՝ ԱԱԲ և այդ առավել արտոնյալ դրույքների տարբերությունը չի կարող մեծացվել: Օրինակ՝ նման առավել արտոնյալ դրույքներ էին գործում Արգենտինայի, Բոլիվիայի և Պերուի միջև, ԱՄՆ-ի և Ֆիլիպինների միջև, Բելգիայի, Հոլանդիայի, Ռուանդայի, Նոր Գվինեայի, Ինդոնեզիայի միջև և այլն: Այս սահմանափակումը ներկայումս էական դեր չունի, քանի որ ԱԱԲ դրույքները շարունակաբար կրճատվել են:

Երկրորդ բացառությունը, սակայն, խիստ էական է: Հոդված 24-ը սահմանում է, որ երկրները կարող են ստեղծել մաքսային միություններ կամ ազատ առևտրի գոտիներ, պայմանով, որ այդ միության կամ գոտու անդամ երկրների միջև առևտուրը ամբողջությամբ ազատականացվի և այլ երկրների նկատմամբ մաքսադրույքները չբարձրացվեն: Օրինակ՝ Հայաստանը ԱՊՀ ազատ առևտրի գոտու անդամ է և ԱՊՀ երկրներից ներմուծվող ապրանքներից որևէ մաքսատուրք չի գանձում: Դա, սակայն, ԱԱԲ-ի խախտում չէ: Նույն սկզբունքով մաքսադրույքներ չկան նաև Եվրոպական միության, Ազատ առևտրի հյուսիս-ամերիկյան գոտու անդամ երկրների միջև:

Արդյո՞ք տարածաշրջանային առևտրային միությունները ցանկալի են: *Պոզիտիվ* տեսակետի համաձայն՝ մասնակի ազատականացումը ավելի լավ է, քան դրա իսպառ բացակայությունը: Ըստ այդ, այսպես կոչված «հեծանիվի տեսության», տարածաշրջանային ազատականացումը վերջին հաշվով կարող է բերել զրոքալ ազատականացման:

Ըստ հակառակ տեսակետի, ավելի լավ է ոչինչ, քան՝ մի քիչ, քանի որ «առևտրի շեղումը» պետք է տարբերել «առևտրի ընդլայնումից»: Ենթադրենք Ա երկիրը 20% մաքսատուրք է սահմանել Բ և Գ երկրներից հագուստի ներմուծման նկատմամբ: Ընդ որում Գ երկրի արտադրողականությունը 25%-ով բարձր է, քան Ա երկրինը, իսկ Բ երկրի արտադրողականությունը բարձր է 15%-ով: Գ-ն մաքսատուրքը մուծելուց հետո 5%-ի առավելություն ունի Ա-ի արտադրողների նկատմամբ, իսկ Բ-ն չի կարող հաղթահարել մաքսատուրքի արգելքը: Այժմ ենթադրենք՝ Ա-ն և Բ-ն մաքսային միություն են կազմում և միմյանց միջև առևտուրը ամբողջովին ազատականացնում են, իսկ Գ երկրի նկատմամբ 20% մաքսատուրքը պահպանում են: Թեպետ Գ-ն նախկինի պես 5% առավելություն ունի Ա-ի արտադրողների նկատմամբ, բայց այժմ Գ-ն 10% թերառավելություն ունի Բ-ի արտադրողների նկատմամբ: Բ-ն, որ մի ժամանակ 10%-ի թերառավելություն ուներ Ա-ի արտադրողների նկատմամբ, այժմ 10%-ի առավելություն ունի: Արդյունքում՝ տեքստիլի արտադրությունը Գ-ից կտեղափոխվի Բ երկիր: Նման տեղափոխությունը, սակայն, համաշխարհային արտադրության համար արդյունավետ չէ, քանի որ ամենից արդյունավետ երկիրը Գ-ն է: Ջագդիշ Բհագվաթիի բնորոշմամբ սա «առևտրի շեղման» դասական օրինակ է:

Նշենք, որ ազատ առևտրի գոտու դեպքում անդամ երկրները ազատականացնում են առևտուրը միմյանց միջև, սակայն, երկրներից յուրաքանչյուրը երրորդ (ոչ-անդամ) երկրների նկատմամբ սահմանում է առանձին մաքսադրույքներ:

Մաքսային միության դեպքում անդամ երկրները ոչ միայն ազատականացնում են առևտուրը միմյանց միջև, այլև երրորդ երկրների նկատմամբ սահմանում են միասնական մաքսադրույքներ: Նկատենք, որ ազատ առևտրի դեպքում, ի տարբերություն մաքսային միության, մաքսային վարչարարությունը անհամեմատ բարդ է: Այսպես՝ ազատ առևտրի գոտու դեպքում կարելի է ապրանքը ներմուծել գոտու անդամ այն երկիր, որում մաքսատուրքը ցածր է, և ապա, առանց մաքսատուրք մուծելու, արտահանել գոտու անդամ մեկ այլ երկիր, որում մաքսատուրքը բարձր է: Նման չարաշահումները կանխելու համար՝ մաքսային մարմինները ստիպված են վերահսկել ապրանքների ծագման կանոնների պահպանումը, որպեսզի թույլ չտան այնպիսի ապրանքների անմաքս ներմուծումը, որոնք իրականում գոտու անդամ մյուս երկրներում չեն արտադրվել:

Տնտեսական միության դեպքում անդամ երկրները ազատականացնում են նաև կապիտալի, աշխատուժի փոխադարձ հոսքերը: Իսկ արժութային միության դեպքում անդամ երկրները ի լրումն սահմանում են միասնական արժույթ: Եվրոպական միությունը արժութային միության կատարյալ օրինակ է: Ազատ առևտրի հյուսիս-ամերիկյան գոտին ազատ առևտրի գոտու օրինակ է:

Ազգային մոտեցման սկզբունք

Ազգերի առավել բարենպաստության սկզբունքը (Հոդված 1) միտված է այլ երկրների միջև խտրականությունը բացառելուն, իսկ ազգային մոտեցման սկզբունքը, որը սահմանված է Հոդված 3-ում, միտված է ներքին ու արտաքին արտադրողների միջև խտրականությունը բացառելուն: Ըստ Հոդված 3-ի՝ ներմուծված ապրանքի նկատմամբ պետք է ցուցաբերվի ոչ պակաս բարենպաստ մոտեցում, քան այն, որը ցուցաբերվում է տեղական ծագում ունեցող

նման արտադրանքների նկատմամբ: Շեշտենք, որ ՄԱԳՀ-ն չի պահանջում, որ ներմուծված ապրանքի նկատմամբ վերաբերմունքը լինի բարենպաստ. այդ վերաբերմունքը կարող է լինել խիստ անբարենպաստ, պայմանով, որ նույնքան անբարենպաստ վերաբերմունք ցուցաբերվի տեղական արտադրանքի նկատմամբ:

Ազգային մոտեցման սկզբունքը մեկնաբանվել է մի շարք էական առևտրային վեճերում: Ընդհանուր մոտեցումը եղել է այն, որ ներքին կանոնակարգերը, օրինակ՝ շրջակա միջավայրի պահպանման բնագավառում, որոնք արտաքուստ ներմուծված ապրանքների նկատմամբ խտրական վերաբերմունք չեն ցուցաբերում, չպետք է դառնան քողարկված խտրական վերաբերմունքի գործիքներ:

Ազգային մոտեցումից բացառություն կատարված է պետական գնումների համար, երբ դա կատարվում է կառավարության սեփական կարիքների համար: Այսպես՝ Հնդկական Հոդված 3:8-ը նախատեսում է, որ կառավարությունները կարող են նախապատվություն տալ տեղական արտադրողներին: Մակայն, Տոկիոյի ռաունդում բանակցված (և Ուրուգվայի ռաունդում վերանայված) պետական գնումների մասին համաձայնագրով էական սահմանափակումներ են դրված կենտրոնական (բայց ոչ տեղական կամ նահանգային) իշխանությունների վրա՝ տեղական արտադրողներին նախապատվություն տալու հարցում:

Քանակական սահմանափակումներ

Սկզբնապես ենթադրվում էր, թե քանակական սահմանափակումները ամբողջովին կվերացվեն կամ կփոխարինվեն մաքսատուրքերով, որոնք, իրենց հերթին, հաջորդաբար կնվազեցվեն: Հնդկական 11-ը ուղղակիորեն նշում է՝ որևէ երկիր որևէ այլ երկրի արտադրանքի ներմուծման նկատմամբ քանակական սահմանափակումներ կամ ներմուծման, արտահանման լիցենզիաներ չպետք է սահմանի: Քանակական սահմանափակումները իսպառ արգելելու կամ մաքսատուրքերով փոխարինելու հիմնավորումն այն էր, որ մաքսատուրքերը առավել թափանցիկ են, իսկ դրանց իջեցումը առավել կառավարելի է: Մակայն՝ քանակական սահմանափակումները պահպանվեցին:

Բացի այդ՝ Հնդկական 11-ը քանակական սահմանափակումները վերացնելու ընդհանուր պահանջից բացառում է գյուղատնտեսական արտադրանքը: Գյուղմթերքների այդ արտոնյալ վիճակը շարունակվեց մինչև Ուրուգվայի փուլի արդյունքում գյուղատնտեսական համաձայնագրի ստորագրումը: Առ այսօր, սակայն, գյուղմթերքների առևտրի կարգավորումը մնում է ԱՀԿ-ի առավել վիճահարույց խնդիրներից մեկը:

Հնդկական 12-ը արտոնում է քանակական սահմանափակումների կիրառումը (չնայած, ըստ Հնդկական 13-ի, ոչ-խտրական սկզբունքով), արտաքին ֆինանսական դիրքի և վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով: Հնդկական 18-ը թեր գարգացած երկրներին արտոնում է քանակական սահմանափակումների կիրառումը նոր արդյունաբերական ճյուղերի ստեղծմանը նպաստելու կամ վճարային հաշվեկշռի նպատակով:

1980-ական թթ-ին երկրները սկսեցին լայնորեն շրջանցել ԱՀԿ-ն և քանակական սահմանափակումներ կիրառել երկկողմ համաձայնագրերի հիման վրա՝ ի դեմս արտահանման կամավոր սահմանափակումների (ավտոմեքենաների, պողպատի, տեքստիլի և այլ ապրանքների առևտրում): ԱՀԿ-ն համաձայնագրերը ներկայումս արգելում են նման երկկողմ համաձայնագրերի կիրառումը, իսկ տեքստիլի և հագուստի մասին համաձայնագրով այդ ոլորտում առկա քանակական սահմանափակումները զգալիորեն կրճատվել են:

Պաշտպանական միջոցներ

Ըստ Հոդված 19-ի՝ էթե անկանխատեսելի զարգացումների հետևանքով, կամ ստանձնած պարտավորությունների ազդեցության հետևանքով որևէ ապրանք ներմուծվում է այնպիսի աճող քանակով, որ լուրջ վնաս է հասցնում նման կամ մրցակից ապրանքների ներքին արտադրողներին կամ ստեղծում է լուրջ վնասի վտանգ, ապա երկիրը կարող է սահմանել ներմուծման ժամանակավոր, այդ թվում քանակական արգելքներ՝ այն չափով և այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է վնասը կանխելու կամ հատուցելու համար: Բայց նման արգելքները պետք է սահմանվեն ոչ-խտրական սկզբունքով, իսկ այն երկրներին, որոնք այդ արգելքների սահմանման հետևանքով տուժում են, պետք է առաջարկվի փոխհատուցում: Հակառակ դեպքում տուժած երկրները իրավունք ունեն հակադարձել՝ սահմանելով համարժեք սահմանափակումներ պաշտպանական միջոցներ կիրառած երկրից ներմուծման նկատմամբ:

Գործնականում երկրները խուսափում են կիրառել Հոդված 19-ով նախատեսված պաշտպանական միջոցները, քանի որ ոչ-խտրականորեն կիրառելու և փոխհատուցում առաջարկելու պահանջները չափազանց խիստ են: Դրա փոխարեն գերադասելի է հակազնագցման ու փոխհատուցման տուրքերի կիրառումը:

Հակազնագցման և փոխհատուցման տուրքեր

Հոդված 6-ը երկրներին արտոնում է միակողմանիորեն, սեփական օրենսդրության հիման վրա, սահմանել ներմուծման արգելքներ, էթե գնագցման կամ լրավճարման հետևանքով ներքին արտադրությունը վնասվում է:

Գնագցում տեղի է ունենում, երբ ներմուծվող ապրանքը վաճառվում է ավելի ցածր գնով, քան արտահանող երկրի շուկայում: Երբ գնագցման պատճառով նյութական վնաս է հասցվում ներքին արդյունաբերությանը կամ ստեղծվում է նյութական վնասի վտանգ, կամ էականորեն կասեցվում է ներքին արդյունաբերական ճյուղի ձևավորումը, ապա երկիրը կարող է սահմանել հակազնագցման տուրք՝ գնագցման մեծության չափով: Հակազնագցման տուրքերի սահմանումը կանոնակարգելու համար Քեննեդու ռաունդում բանակցվեց (և Տոկիոյի ու Ուրուգվայի ռաունդներում վերանայվեց) առանձին համաձայնագիր:

Փոխհատուցման տուրքերի սահմանման դեպքում «մեղավորը» ոչ թե օտարերկրյա ֆիրմաների գնային քաղաքականությունն է, այլ օտարերկրյա կառավարությունների տրամադրած լրավճարները, որոնց հետևանքով օտարերկրյա արտադրողը ստանում է առավելություն: Դարձյալ, երբ ներմուծող երկիրը վնասվում է արտահանող երկրի լրավճարի հետևանքով, ապա ներմուծող երկիրը կարող է կիրառել փոխհատուցման տուրքեր՝ այնպես, որ հակադարձի կամ չեզոքացնի օտարերկրյա լրավճարման ազդեցությունը: Լրավճարների տրամադրումը և փոխհատուցման տուրքերի սահմանումը կանոնակարգելու նպատակով Տոկիոյի ռաունդում բանակցվեց (և Ուրուգվայի ռաունդում էապես վերափոխվեց) առանձին համաձայնագիր:

Լրավճարները ԱՀԿ-ի առավել բարդ հիմնախնդիրներից են: Նախ՝ լրավճարները կարող են փոխարինել մաքսատուրքերին: Այսպես՝ երկիրը, որը որևէ ապրանքի ներմուծման մաքսատուրքը 20%-ից կրճատում է 10%, կարող է ներքին արտադրողներին տրամադրել 10% լրավճար և փաստացի փոխհատուցել մաքսատուրքի կրճատումը: Այնուհետև՝ էթե ներմուծող երկիրը հրաժարվում է մաքսատուրքը կրճատել 20%-ից 10%, ապա արտահանող երկիրը կարող է արտահանողներին տրամադրել 10% լրավճար և դրանով իսկ զրկել ներմուծող

երկրին՝ ինքնուրույն իր առևտրային քաղաքականությունը որոշելու իրավունքից: Ավելին՝ կառավարության կամայական գործողություն կարելի է համարել լրավճարի տրամադրում, քանի որ ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության, հետազոտությունների, կապի և այլ ոլորտներում կառավարության ներդրումները ազդում են տնտեսական գործունեության և հետևաբար արտաքին առևտրի վրա: Այնպես որ վիճարկելի է, թե լրավճարների տրամադրումը որ կետից է դառնում «անազնիվ»:

Հոդված 16-ը սահմանում է, որ երբ որևէ երկիր լրավճար է տրամադրում, որի շնորհիվ աճում է իր արտահանումը կամ կրճատվում է իր ներմուծումը, ապա պարտավոր է լրավճարման չափերի ու բնույթի, ինչպես նաև լրավճարի մոտավոր ազդեցության ու այն անհրաժեշտ դարձնող հանգամանքների մասին տեղեկացնել մյուս երկրներին և եթե պարզվում է, որ լրավճարը վտանգում է մեկ այլ երկրի շահերը, ապա լրավճար տրամադրող երկիրը պարտավոր է քննարկել լրավճարումը սահմանափակելու հնարավորությունը:

Երբ լրավճարը տրամադրվում է առաջնային արտադրանքների արտահանումը խթանելու նպատակով, ապա լրավճարը չպետք է հանգեցնի այդ արտադրանքի արտահանման համաշխարհային շուկայում երկրի կշռի մեծացմանը:

Ոչ առաջնային արտադրանքների դեպքում՝ արտահանման լրավճարը չպետք է հանգեցնի արտահանման շուկայում ավելի ցածր գնով վաճառվելուն, քան ներքին շուկայում:

Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիրը հստակեցնում է, թե որոնք են արգելված, կիրառելի և ոչ-կիրառելի լրավճարները:

Նշենք, որ լրավճարների կիրառումը կարող է ունենալ երեք տարբերակ: Առաջին դեպքում Ա երկիրը լրավճար է տրամադրում իր արտադրողներին, որոնք արտահանում են Բ երկիր: Այս դեպքում Բ երկիրը կարող է փոխհատուցման տուրք կիրառել: Երկրորդ դեպքում Ա երկիրը լրավճար է տրամադրում Գ երկիր արտահանման համար և դրանով իսկ Գ երկրից դուրս է մղում Բ երկրի արտահանողներին: Այս դեպքում Ա երկրի արտադրանքը Բ երկիր չի արտահանվում և հետևաբար դրանց նկատմամբ Բ երկիրը չի կարող փոխհատուցման տուրք կիրառել: Երրորդ դեպքում Ա երկիրը լրավճար է տրամադրում իր արտադրողներին, որոնք իրացնում են ներքին շուկայում և դրանով իսկ իր շուկայից դուրս է մղում Բ երկրի արտահանողներին: Այս անգամ նույնպես ապրանքները Բ երկիր չեն արտահանվում և դրանց դիմաց փոխհատուցման տուրքեր չեն կարող կիրառվել: Երկրորդ և երրորդ դեպքերում Բ երկիրը պետք է դիմի ԱՀԿ-ի վեճերի լուծման մարմնին:

Թեր զարգացած երկրներ

ՄԱԿ-ի դասակարգմամբ 49 երկրներ ներկայումս համարվում են թեր զարգացած (այդ երկրներում մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամուտը նվազ քան 750 դոլար է): Թեր զարգացած երկրների մեծ մասը՝ 33 երկիր, գտնվում է Աֆրիկայում: ԱՀԿ-ն որպես հիմք է վերցնում ՄԱԿ-ի դասակարգումը: Թեր զարգացած 49 երկրներից 32-ը ԱՀԿ-ի անդամ են:

Ինչպես նշվեց՝ Հոդված 18-ը թեր զարգացած երկրներին արտոնում է քանակական սահմանափակումների կիրառումը նոր արդյունաբերական ճյուղի ստեղծմանը նպաստելու կամ վճարային հաշվեկշռի խնդիրների հաղթահարման նպատակով: 1964թ-ին ՄԱԳՀ-ում ավելացվեց Բաժին 4-ը՝ նվիրված առևտրի և զարգացման խնդիրներին: Հոդված 36:8-ը սահմանում է, որ երկրները թեր զարգացած երկրներից փոխադարձություն չեն ակնկալում իրենց կողմից մաքսատուրքերի ու այլ խոչընդոտների կրճատման կամ վերացման դիմաց: Հոդված 37-ը ի լրումն նշում է, որ երկրները պարտավորվում են մեծ առաջնություն տալ այն

արտադրանքների նկատմամբ կիրառվող խոչընդոտների կրճատմանը, որոնք հատուկ հետաքրքրություն են ներկայացնում թեր զարգացած երկրների համար:

Հոդված 37-ի հիման վրա զարգացած երկրները սահմանեցին Նախապատվությունների ընդհանրացված համակարգ (ՆՀՀ), որով թեր զարգացած երկրներից ներմուծման նկատմամբ սահմանում են առավել արտոնյալ մաքսատուրքեր, քան մնացած երկրներից ներմուծման նկատմամբ: Նախապատվությունները շահառու երկրների համար պետք է լինեն ընդհանրացված (ընդգրկեն բոլոր ապրանքները), ոչ-խտրական (չպետք է նախատեսված լինեն սուկ «ընկեր» երկրների համար) և ոչ-փոխադարձ:

Գործնականում՝ թեր զարգացած երկրների մեծ մասը (հատկապես ամենաաղքատները) ՆՀՀ-ից գրեթե ոչինչ չշահեցին: Թեպետ որոշ երկրներ, հատկապես համեմատաբար «հարուստները»՝ Բրազիլիան, Հնդկաստանը, ինչպես նաև Թայվանը, Հոնգ-Կոնգը, Մինգապուրը, Թաիլանդը, Մալազիան, զգալիորեն շահեցին:

ՆՀՀ-ի հիմնական պրոբլեմը նրանում էր, որ այն իրականում ընդհանրացված չէր. չէր ներառում բոլոր ապրանքները, հատկապես այն ապրանքները, որոնցում թեր զարգացած երկրները շահագրգռված էին: Հատկապես ԱՄՆ-ի դեպքում ՆՀՀ-ն չէր ներառում տեքստիլը, կաշվե արտադրանքը, կերամիկան, ապակին, գյուղմթերքները: Բնական է, որ թեր զարգացած երկրները հենց հատկապես այդպիսի ապրանքներում կարող են հաջողության հասնել և ոչ թե, ասենք, հեռահաղորդակցության սարքավորումներում: Իրավիճակը փոքր-ինչ շտկվեց վերջին տարիների ընթացքում, գյուղմթերքների մասին և տեքստիլի մասին համաձայնագրերի արդյունքում, որոնց շնորհիվ այդ ոլորտներում առկա սահմանափակումները զգալիորեն կրճատվեցին:

2005թ-ին Հոնգ-Կոնգում, ԱՀԿ-ի 6-րդ նախարարական համաժողովում որոշվեց մինչև 2008թ-ը անմաքս և անքվոտա մուտքի հնարավորություն տալ թեր զարգացած երկրների բոլոր ապրանքներին և կամ այդ ապրանքների 97%-ին: Ներկայումս, բացառությամբ ԱՄՆ-ի, բոլոր զարգացած երկրները կատարել են իրենց պարտավորությունը՝ 97% ապրանքների մասով:

Ընդհանուր բացառություններ

Հոդված 20-ը երկրներին արտոնում է կիրառել ցանկացած սահմանափակում, եթե դա անհրաժեշտ է ա. հասարակական բարոյականությունը պահպանելու համար, բ. մարդու, կենդանիների կամ բույսերի կյանքը պահպանելու համար, գ. մշակութային արժեքների պահպանության համար, դ. բնական պաշարների պահպանության համար և այլն, պայմանով, որ այդ սահմանափակումները չլինեն խտրականություն դնելու միջոց կամ առևտրի քողարկված սահմանափակումներ:

Ի լրումն՝ Հոդված 21-ը սահմանում է անվտանգության հետ կապված բացառությունները, մասնավորապես՝ երկրները կարող են կիրառել ցանկացած սահմանափակում, եթե դա անհրաժեշտ է իրենց անվտանգության էական շահերը պաշտպանելու համար:

Բացի այդ Հոդված 25:5-ով երկրները երկու երրորդ մեծամասնությամբ (այդ մեծամասնությունը պետք է կազմի անդամ երկրների կեսից ավելին) կարող են բացառիկ դեպքերում որևէ երկրի ազատել ՄԱՀԳ-ով նրա վրա դրված պարտավորություններից: Պարտավորություններից ազատման առավել հայտնի դեպքը 1965թ-ի Ավտոմեքենաների համաձայնագիրն է (դրա գործողությունը դադարեցվեց 2001թ-ին ԱՀԿ-ի վեճերի լուծման մարմնի որոշման հիման վրա):

ԱՀԿ-ի կառավարումը

Ներկայումս ԱՀԿ-ի անդամ են 153 երկրներ: Հայաստանը ԱՀԿ-ի 146-րդ անդամն էր (անդամակցել է 2003թ-ի փետրվարի 5-ին): Ադրբեջանը և Ռուսաստանը դեռևս անդամ չեն: Ուկրաինան անդամ է 2008թ-ի մայիսի 18-ից, Վրաստանը՝ 2000թ-ի հունիսի 14-ից, Ղրղզստանը՝ 1998թ-ի դեկտեմբերի 20-ից:

ԱՀԿ-ի կառավարման բարձրագույն մարմինը Նախարարական համաժողովն է, որը բաղկացած է բոլոր անդամ երկրներից և պետք է գումարվի առնվազն երկու տարին մեկ: Ընթացիկ կառավարումը իրականացնում է Ընդհանուր խորհուրդը, որը գործում է նաև իբրև Վեճերի լուծման մարմին և Առևտրային քաղաքականության վերանայման մարմին: Ընդհանուր խորհրդում յուրաքանչյուր երկիր ունի մեկ անդամ և մեկ ձայն: ԱՀԿ-ում բարձրագույն գործադիր պաշտոնը գլխավոր տնօրենինն է:

Հոդված 25:4-ը սահմանում է, որ ԱՀԿ-ում որոշումները, եթե այլ բան նախատեսված չէ, ընդունվում են հաշվարկված քվեների մեծամասնությամբ: Հոդված 33-ը սահմանում է, որ նոր անդամների ընդգրկումը պահանջում է առկա անդամների առնվազն երկու երրորդի համաձայնությունը:

Հոդված 30-ը սահմանում է, որ ազգերի առավել բարենպաստության սկզբունքը և մաքսատուրքերի կապակցման սկզբունքը կարող են փոփոխվել միայն բոլոր անդամ երկրների համաձայնությամբ: ՄԱԳՀ-ում մնացյալ փոփոխությունները կարող են կատարվել ձայների երկու երրորդ մեծամասնությամբ, սակայն, այդ փոփոխությունները գործում են միայն այն երկրների համար, որոնք դա ընդունել են:

Առևտրային վեճերի առնչությամբ Հոդված 22-ը պահանջում է, որ յուրաքանչյուր երկիր բարյացակամ վերաբերմունք ցուցաբերի ցանկացած այլ երկրի նկատմամբ և բոլոր վեճերը հնարավորության դեպքում լուծվեն բանակցությունների միջոցով:

Հակառակ դեպքում, Հոդված 23-ը սահմանում է, որ եթե որևէ երկիր (բողոքող երկիր) համարում է, որ ՄԱԳՀ-ով իրեն հասնող որևէ օգուտ վերացվել կամ նվազեցվել է մեկ այլ երկրի գործունեության հետևանքով կամ մեկ այլ երկրի՝ իր պարտավորությունները չկատարելու հետևանքով (պատասխանող երկիր), ապա կարող է պահանջել հանձնաժողովի ստեղծում, որը կքննի խնդիրը և Ընդհանուր խորհրդին կներկայացնի առաջարկություն խնդրի լուծման վերաբերյալ: Հանձնաժողովները բաղկացած են երեք անձից: Հանձնաժողովի առաջարկությունները ընդունվում են բացասական կոնսենսուսով: Հանձնաժողովի առաջարկները կարող են վիճարկվել Վճռաբեկ մարմնում, որի որոշումը, նույնպես, Ընդհանուր խորհրդի կողմից ընդունվում է բացասական կոնսենսուսով: Եթե Հանձնաժողովը և Վճռաբեկ մարմինը եզրակացնում են, որ պատասխանող երկիրը իսկապես խախտել է իր պարտավորությունները, ապա նրան տրվում է խելամիտ ժամանակ, մինչև իր գործողությունները կհամապատասխանեցնի ԱՀԿ-ի պահանջներին: Հակառակ դեպքում Ընդհանուր խորհուրդը բողոքող երկրին կարող է արտոնել կիրառել հակամիջոցներ՝ պատասխանող երկրի նկատմամբ:

ԱՀԿ-ի համաձայնագրերը ներառում են

- ա. ԱՀԿ-ի ստեղծման Մարաբեշի համաձայնագիրը,
- բ. Ապրանքների առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերը,
- գ. Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը,
- դ. Մտավոր սեփականության՝ առևտրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին համաձայնագիրը,

- ե. Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին փոխհամաձայնությունը,
 գ. Առևտրային քաղաքականության վերաքննության գործակառույցը,
 է. Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերը:

Հապավումներ

- ԱՀԿ – Առևտրի համաշխարհային կազմակերպություն
 ՄԱԳՀ – Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիր
 ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
 ԱԱԲ – Ազգերի առավել բարենպաստության սկզբունք
 ԱՄ – Ազգային մոտեցման սկզբունք
 ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն
 ՆՀՀ – Նախապատվությունների ընդհանրացված համակարգ

Ինդեքս

- | | |
|--|---|
| Ազգային մոտեցման սկզբունք – National Treatment principle, 3 | Համաշխարհային մաքսային կազմակերպություն – World Customs Organization, 3 |
| Ազգերի առավել բարենպաստության սկզբունք - Most Favoured Nation principle, 3 | Մաքսատուրքերի կապակցում – Tariff binding, 2 |
| Աննեսիի փուլ – Annecy round, 1 | Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիր – General Agreement of Tariffs and Trade, 1 |
| Ապրանքների նկարագրման և համարակալման ներդաշնակեցված համակարգ – Harmonised Commodity Description and Coding System, 3 | Նախապատվությունների ընդհանրացված համակարգ – Generalized System of Preferences, 8 |
| Առևտրային քաղաքականության վերանայման մարմին - Trade Policy Review Body, 9 | Նախարարական համաժողով – Ministerial Conference, 9 |
| Գլխավոր տնօրեն – Director-General, 9 | Ուրուգվայի փուլ – Uruguay round, 2 |
| Դիլլոնի փուլ – Dillon round, 1 | Վեճերի լուծման մարմին - Dispute Settlement Body, 9 |
| Ընդհանուր խորհուրդ - General Council, 9 | Տոկիոյի փուլ – Tokyo round, 1 |
| Թորքուեյի փուլ – Torquay round, 1 | Քեննեդու փուլ – Kennedy round, 1 |
| Հակազնազցումային համաձայնագիր – Anti-dumping code, 1 | |

Գրականություն

Michael J.Trebilcock, Robert Howse, *The Regulation of International Trade*, Routledge, 2001.

WTO, The Legal Texts, *The Results of the Uruguay Round of Multilateral Trade Negotiations*, Cambridge, 2002.

Paul R.Krugman, Maurice Obstfeld, *International Economics, Theory & Policy*, Addison Wesley, 2006, *Ch. 9*.

Government of Canada, Key Economic Events, 1965 - Canada–United States Auto Pact, <<http://www.canadianeconomy.gc.ca/English/economy/key.html>>.

UNCTAD, GSP Newsletter, N 9, July 2008, <http://www.unctad.org/en/docs/ditcmisc20083_en.pdf>.